

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՊՈԶԱՊԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(19 դեկտեմբերի 2004 թ.)

«Յաղթող և Սուրբ Հայրապետ, նման մեծին Մովսեսի»:

(Շարակնոց)

«Յանուն Տօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ. ամէն»:

Շարականի այս փողերը առնված են Ներսէն Շնորհալի Հայրապետի խոսքերից, որը նվիրված է Սուրբ Հակոբ Մժբնեցի Հայրապետին: Հաղթող և Սուրբ Հայրապետ նման մեծին Մովսեսի: Պարթևական ընդանիքից սերող Մժբնեցի Հակոբ Հայրապետը 4-րդ դարում քրիստոնեական ընդհանրական Եկեղեցու ամենահայտնի Հայրապետներից մեկն է եղած: Մեծն Կոնստանդին կայսրը Բյուզանդիոնի իրավամբ ասել է, որ երեք սուրբ անձեր են, որոնք կապում են երկինքը երկրին: Նրանցից առաջինը Անտոն Անապատական Եգիպտացի սուրբն էր, երկրորդը՝ Բյուզանդիայի սահմանների մեջ ապրող Սեղբեսպրոս Հայրապետը, և երրորդը՝ Միջագետքի մեջ ապրող Մժբնեցի Հակոբ Հայրապետը:

Ո՛վ էր Մժբնեցի Հակոբ Հայրապետը: Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ մեր հավաքի Հոր հորաքոջ որդին էր: Երբ Անակը դավաճանորեն սպանեց Հայոց Խոսրով արքային, Անակի ընդանիքը սրի անցկացվեց հայ իշխանների կողմից և Սուրենը ու Հակոբը փախցվեցին դայակների կողմից դեպի Կապադովկիա և Կեսարիա: Այնտեղ քրիստոնեական դաստիարակություն ստացան և հետո որպես արքայական ընդանիքից սերածներ փարվեցին Պարսկաստան՝ այնտեղ արքայավայել ապրելու համար, սակայն Հակոբը քրիստոնեական ոգով մեծացած և ճգնողական կյանքը լավ ճանաչող մեկը չուզեց արքայավայել ապրել, այլ թողեց և գնաց Մժբնի մուրերը, այնտեղ անապատների մեջ, անտառների մեջ ապրելու համար ճգնողական կյանքով:

Վարքագիրը Մժբնեցի Հակոբ Հայրապետի կրես, թե նա ճգնավոր էր, նա սքանչելագործ էր, հրաշքներ էր գործում, նաև կարողանում էր կանխագուշակել մարդկանց կյանքում ինչ էր պարտադիր ապագային: Նա բազում հրաշագործ արարքներ է գործել, որի համար հրաշագործ և սքանչելագործ է համարվել ժողովրդի կողմից, շատ սիրված անձնավորություն է եղել և ծառայել է մարդկության քրիստոնեական, բարոյական զարգացմանը՝ իր կյանքի օրինակը ծառայեցնելով նրանց որպես ճշմարիտ քրիստոնյայի կյանքի ուղի և կարողացել է շատ-շատերին համոզել և քրիստոնեական հավաքի բերել՝ ճանաչել փալով նրանց գՔրիստոս:

325 թ. նա Նիկիայի Տիեզերական Ժողովին է մասնակցել: Հավատո հանգանակը նաև իր մասնակցությամբ է կազմվել: Սուրբ Հակոբը նաև Քրիստոսը մարդ դավանող Արիոսի

վարդապետության ընդդիմադիրներին մեկը եղած է՝ չընդունելով, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, սոսկական մարդ էր, ոչ ասելով նման մուսար և թյուր ըմբռնումներին:

Ս. Հակոբը մեծ հրաշագործ էր. կրսեն, թե երբ իր աղոթավայրից՝ ճգնարանից իջնում էր դեպի Մծբին քաղաք երթալու համար, ի միջի այլոց նա երբեք գրասպ չէր օգտագործած, այլ միշտ ուրբով է ճամփորդած, և գեպի եզերքին ձկնորսներին հարց էր փայխ, թե որտեղ է ծանծաղ մասը այս գեպի, որպեսզի կարողանա անցնիլ, նրանք ծաղրանքով ասում են. «Ճգնավոր, դու կարող ես ջրի վրայով քայլել և գնալ»: Նա իսկապես իր վերարկուն է փռում ջրի վրա, գեպի վրա և վերարկուի վրա նստած անցնում է գեպի մյուս կողմը՝ զարմացնելով ձկնորսներին և նրանց, որոնք ծաղրանքով էին վերաբերվում իրեն:

Մի օր, քաղաքից դուրս մեկնած ժամանակ, ավագակների մի խումբ է հանդիպում և նրան ուզում են կողոպտել: Նրանցից մեկը մեռյալ է ձևանում և պառկում է գեպին և մյուս ավագակները մոտենում են և ասում. «Ով ճգնավոր, մահացած ունենք, սակայն թաղման համար դրամ չունենք, եթե մեզ կարողանաս օգնել, մենք նրան կտանենք, կթաղենք»: Նա ազնիվ մարդ էր, խաբում են, խաբվում է և իր ունեցածը փայխ է այդ ավագակներին, որպեսզի իրենց սուր մեռել ձևացած ընկերը փանեն-թաղեն: Բայց երբ գնում են սուր մեռելի մոտ, փեսնում են, թե նա իսկապես մեռյալ է, մեռած է, զարմանում են և անդրադառնում են իրենց ասածին և մոտենում են ճգնավորին և նրան վերադարձնում փվածը և խնդրում, որ աղոթքով իրենց ընկերոջ կյանքը եր պարզեի, և նա այդպես էլ անում է:

Հակոբ Հայրապետը հայ ժողովրդի կողմից շատ սիրված մի անձնավորություն է եղած: Այն ժամանակ հայությունը տարածված էր Մծբինի, Ամիդի, Պարսկաստանի փարբեր կողմերը: Մծբնա Հայրապետը փեսնելով մարդկանց անհավատությունը, փեսնելով մարդկանց՝ Ս. Գրքի հանդեպ ունեցած հավատքի պակասը և չհավատալը Նոյյան փառանքով մարդկության փրկվելուն, գալիս է Արարատյան աշխարհ՝ այստեղ Արարատ լեռը բարձրանալու համար: Փորձում է քանիցս, սակայն ամեն անգամ, որ Արարատին մոտենում է, դեպի վեր բարձրանում է, գիշերը երբ հոգնած ննջում է, առավոտյան իրեն գտնում է Արարատի ստորին փեշերին: Նորից է փորձում բարձրանալ, բազում անգամներ փորձում է, բայց չի կարողանում զագաթին հասնել և Նոյյան փառանքից մի մասունք իջեցնել: Այս փեսնելով Աստուծո հրեշտակը՝ մի առավոտ նրա բարձի փակ է դնում Նոյյան փառանքի մասունքը և ասում իրեն. «Ով Մծբնեցի Հայրապետ, եկուր, մի բարձրացիր Արարատի գագաթը, ահավասիկ ես բերել եմ քեզ Նոյյան փառանքի մասունքը, որ հանձնում եմ ահա քեզ»:

Գիտեք, սիրելի հավատացյալներ, որ մեր Գանձապանը Նոյյան փառանքի այդ մասունքը պահված է մինչև հիմա անաղարտ կերպով և այդ մասունքը փայտի քարացած վիճակով պահում ենք վրան մի խաչ դրած, ինչպես հին աշխարհը փրկվեց Նոյի միջոցով՝ Արարատի գագաթին Նոյյան փառանքը հանգցեցնելով, նույն ձևով այդ փառանքի մասունքի վրա աստվածատուր, երկնատուր խաչն ենք դրած որպես փրկության միջոց, որպեսզի ով որ այդ խաչին մոտենա, փրկություն գտնե:

Ահավասիկ մի սուրբ, որի հիշատակը երեկ Հայաստանյայց Եկեղեցին կարարեց: Հայ ժողովրդի համար նա շատ պաշտելի անձնավորություն էր դարձած և այդ պատճառով էլ միշտ գնահատված է եղել և բազում եկեղեցիներ իր անունն են կրում այսօր՝ նվիրված լինելով Մծբնեցի Սուրբ Հակոբ Հայրապետին:

Այսօր մեր կյանքի մեջ, մեր կյանքի թոհուրոհի ընթացքին, երբ մեր կյանքը գնում է դեպի աշխարհականացում, ինչքը, հարստությունը, մեքենաները և կյանքի վայելքները մեզ հրապուրում են, մեզ կանչում են իրենց հետևից, երբ մենք մեր աղոթքը մոռացած գնում ենք աշխարհայնացման երևից, ո՛վ արդյոք մեզ ցույց պիտի փա ճշմարիտ ճանապարհը աստվածգիտության, մարդասիրության, զոհողության, բարեկամության, սիրո ճանապարհը, ո՛վ վաճգիտության, մարդասիրության, զոհողության, բարեկամության, սիրո ճանապարհը, ո՛վ մեզ պիտի ցույց փա: Մեր սուրբերը անսխալական մարդիկ չեն եղած, բայց նրանք իրենց կյանքը բոլորով սրբով նվիրած են Աստուծո պաշտամունքին և Աստուծո խրատներից երբեք հեռու չեն փախչել, այլ հավատարմորեն իրենց կյանքն սկզբից մինչև վերջ նվիրել են Աստուծո պաշտամունքին՝ աղոթքով, զոհողությամբ, մարդասիրությամբ և կարողացել են իրենք իրենց սրբացնել այդ ճանապարհի ընթացքին:

Խառնաշփոթ մեր կյանքը նմանվում է փոթորկուտ, պեկոծ մի օվկիանի, և մենք՝ նավարկողներ այդ օվկիանի մեջ, մեր սուրբերու կյանքերը Մծբնեցի Նայրապետից սկսած, Սուրբ Մքենիաննոսից սկսած, Դավիթից սկսած, Սողոմոնից սկսած մեզ համար կյանքի փոթորկուտ, պեկոծ նավավարության ընթացքին լուսեղեն փարոսներ են, որ ցույց են տալիս մեզ ճշմարտության, խաղաղության նավահանգիստի ուղին:

Մի՛ մոլորվեք կյանքի շալոթություններից, մի՛ սպասեք, որ ձեր սեղանները միշտ ճոխ լինեն համադամ կերակուրներով: Մծբնեցի Նայրապետը սնվել է պտուղներով և խոտով, միս երբեք չի կերել և հագել է այծի մազերից շինված, մարմինը ծածկող հագուստներ: Ես չեմ ասում, որ մենք այսօր պետք է հրաժարվենք կյանքի բոլոր բարիքներից, բայց մեր կյանքի ճանապարհին պետք չէ ուրանանք զԱստված, պետք չէ մոռանանք այն խաչայլը, որ Գողգոթայի բարձունքին իր անմեղ արյունը թափեց մեր մեղքերը քավելու համար, մեր փրկության համար: Ճանաչենք Նրան և հետևենք Նրա կյանքին:

Այո՛, Մծբնեցի Նայրապետի կյանքը մեզ համար թող օրինակելի մի կյանք լինի, մենք էլ զոհողություններ հանձն առնենք, աշխարհի շալոթությունները թող չհրապուրեն մեզ, աշխարհականացման բոլոր ձգտումները հեռու պահենք մեզանից, մեր հեռուստացույցների վրա ցուցադրվող անբարոյական ֆիլմերը չդիտենք, այլ ըսենք ցույց տվող մարդկանց, որ դա ազգի նկարագիրը խաթարող, ամենավատ անբարոյական երևույթներից մեկն է այս աշխարհի վրա: Մաքրենք մեր հոգիները՝ սուրբերի ճանապարհին հետևելով, որպեսզի կարողանանք փրկության թագին ու պսակին արժանանալ և Սուրբ Նակոբի հիշատակով ապրելու այս կյանքի մեջ այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: